ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու, ՀՊՄՀ

ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ԲՈՆԱՋԱՎԹՄԱՆ ՀԱՐՑԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ (1908-1914 թթ.)

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո քուրդ աղաներն իրենց պահեցին խարդախությամբ կամ բռնությամբ հայերից խլած վանքապատկան ու եկեղեցապատկան կալվածքները: Օգտվելով պետական աջակցությունից՝ նրանք հաշվի չառան հայ հոգեւոր հաստատությունների իրավացի գանգատներն ու բողոքները:

Եթե նկատի ունենանք, որ արեւմտահայության գլխավոր հարստությունը հողն էր, ապա հասկանալի եւ դյուրըմբռնելի է դառնում Վանի նահանգում վանքապատկան եւ եկեղեցապատկան կալվածքների հետ կապված բազում հարցերի եւ հողազրկման ծանրության բացահայտման կարեւորությունը: "Биржевые ведомости" եւ "Русские ведомости" թերթերի ռուս լրագրող եւ գրող Արիադնա Տիրկովան, ով 1911-1912 թթ. աշխատել էր Օսմանյան Թուրքիայում, նկատել էր, որ հողային հարցն արմատական եւ միաժամանակ վտանգավոր էր իթթիհատական կառավարության համար: Նա գիտեր, որ այս հարցում հայերը տեսականորեն ճիշտ էին, բայց մյուս կողմից էլ գտնում էր, որ բեկ-ավատատերերն ուժեղ էին իրենց հարստությամբ, ազդեցությամբ եւ ճնշում էին գործադրում բոլոր միջոցներով[1]: Միաժամանակ Օսմանյան խորհրդարանի Մուշի երեսփոխան Գեղամ Կարապետյանն էլ փաստում էր, որ սխալ էր կարծել,

---

[1] **А.Тыркова,** Старая Турция и младотурки. Годь в Константинополе, Петроград, 1916, с. 66.

թե հողային՝ այդ թվում վանքապատկան եւ եկեղեցապատկան հողերի վեճերի առիթով ոչ բոլոր հայերն ու քրդերն էին իրար դեմ լարված[2]:

Հայոց վանքերը ժամանակին ունեցել են բազմաթիվ վարելահողեր եւ արոտավայրեր, որոնք արձանագրված են եղել վանահայր վարդապետների անուններով: Քանի որ նրանք անժառանգ էին, կառավարությունն այդ հողերը համարել էր «մահլյուլ» (մահլիլ, այսինքն՝ պետական-անտեր)[3] եւ իրավունք վերապահել դրանք վաճառել, թեեւ անժխտելի էր, որ այդ հողերը պատկանում էին վանքերին կամ եկեղեցիներին[4]:

Հողային կալվածները արձանագրությամբ ազգի անունով դարձնելու խնդիրները կառավարությունը մերժում էր, նույնիսկ եթե «մյութեւելիները» (միթեւելիները) կամ նրանց օրինական ժառանգները պահանջում էին:

Ավելին, իշխանությունները շարունակում էին Վանի նահանգի վանքապատկան կալվածքների բռնագրավումները: 1913 թ. «Վան-Տոսպը» գրում էր. «Զոռպաները դեռ մինչեւ այսօր էլ կը շարունակեն գրավել եւ

---

2 **Գ. Տէր-Կարապետեան** (Մուշի երեսփոխան), Հողային հարցը հայաբնակ նահանգներու մէջ, 1910, դեկտեմբերի 10,Կ.Պոլիս, էջ 5:

3 Օսմանյան քաղաքային եւ կրոնական օրենքների համաձայն՝ բարեգործական-մասնավոր նպատակով առանձնացված հողային նվերը կոչվում էր «վագֆ»: Այն կարելի էր նվիրել պայմանով, որ այդ կալվածքի հասույթը եկեղեցուն տրամադրվեր միայն մեկ նպատակով, օրինակ՝ ձեթ, մոմ, աղբյուրի ջուր եւ այլ անհրաժեշտ իրեր ձեռք բերելու կամ դրանք աղքատներին հատկացնելու համար: «Վագֆ» կոչվող հողերը մյուս տեսակի կալվածքների նման կարող էին առուծախի առարկա դառնալ այն տարբերությամբ միայն, որ եկեղեցական կամ մարդասիրական այն հաստատությունը, որի «վագֆը» եղել էր առուծախի ենթարկված այդ հողատարածքը, յուրաքանչյուր առուծախի կամ ժառանգությամբ փոխանցվելու ժամանակ պետք է ստանար իրեն հասանելիք օրինական տուրքը: «Վագֆը» լինում էր երկու տեսակի՝ ա) «իճարեի վահիդե» եւ բ) «իճարեթեյն»: «Իճարեի վահիդեն» նվիրատվության այն տեսակն էր, երբ կալվածքը չէր կարող փոխանցվել մեկ ուրիշին, այլ մնում էր «մյութեվելլիի»՝ խնամակալի հսկողության ներքո՝ հօգուտ այն հաստատության, որին նվիրաբերվել էր. բ) «իճարեթեյն վագֆին» նվիրատվության այն տեսակն էր, երբ կալվածքը չէր ունենում որեւէ օրինական ժառանգորդ եւ հանդիսանում էր «մահլյուլ» (անտեր): «Վագֆը», որ ձեւով էլ որ լիներ, ըստ օրենքի՝ պետք է արձանագրված լիներ ապրող անձի անունով եւ ունենար իր «մյութեվելլին»: Հայ Եկեղեցու «վագֆ» կալվածքները հիմնականում «իճարեթեյնով» էին: Եվ քանի որ Հայ Եկեղեցին, որը տիրացել էր այս կամ այն հողին, պարտավոր էր ապացուցել եւ հաստատել, որ ինքը գոյություն ունեցող, ապրող անձ է, փորձեց դիմել անուղղակի միջոցների: Բանն այն էր, որ եկեղեցին սովորաբար կոչվում էր այս կամ այն սրբի անունով, որը ներկայացվում էր որպես պատմական անձ, եւ ստացված «վագֆը» արձանագրվում էր նրա անունով: Այս անուղղակի ձեւերը օրինական դժվարությունները հարթելու համար մտածված հանճարեղ միջոցներ էին, որից անտեղյակ չէր կառավարությունը, որը ցանկանում էր «իճարեթեյնով» շատ «վագֆներ» իբրեւ «մահլյուլ» բռնագրավել: Տես «Ս. Էջմիածինը եւ Հայոց ցեղասպանությունը», Ս. Էջմիածին, 2010, էջ 315-319:

4 «Մշակ», Թիֆլիս, 1912, հունիսի 17, թ. 13:

յուրացնել մեր վանական կալվածներու ընտրելագույն մասերը եւ վարելահողերը, մարգագետինները, արոտավայրերը եւ քարհանքերը»[5]:

Դեռեւս 1909 թ. երիտթուրքական դատարանը եղեռնագործության մեղադրանքով ամբաստանել էր Վարագա վանքի տարածքների պահպանությունն իրականացնող մի հայի, ով վանքի սահմաններից փորձել էր հեռացնել թուրք մշակների եւ իբր թե ծեծել էր նրանց, ովքեր վանքի խոտը ցանկացել էին փոխադրել իրենց էֆենդիների տները: Եվ քանի որ էֆենդիները դատարանում էին աշխատում, դատապարտեցին հային[6]:

Աղբակ գավառի մյուդիրը, ի թիվս հայկական այլ տարածքների, կեղծ կալվածագրերով բռնագարվել էր նաեւ Ս. Բարդուղիմեոս վանքի հողերը, արոտավայրերը, մարգագետինները, որի արդյունքում վերացել էին հացահատիկ ցանելու համար նախատեսված հողատարածքները[7]:

Կառավարությունը սխալ համարեց Արճեշում Մեծոփա վանքի սեփական հողերի համար եղած սրբագրությունը եւ հետ պահանջեց վանքի անունով տրված քոչանները, իսկ քոչան տվող պաշտոնյան էլ պատասխանատվության ենթարկվեց[8]:

Հետաքրքրական էր, թե դատաստանական դահլիճը ի՞նչ կերպով էր վերաբերվում հայերի հողազրկումներին դատերը վճռելիս, իսկ կառավարությունն էլ ի՞նչ եղանակով էր դատավճիռները գործադրում:

Հայաթափման եւ հողերի բռնագրավման այդպիսի օրինակ է նաեւ Խոշաբ գավառի Սալախանե գյուղի հողային հարցը: 1884 թ. թուրքական իշխանությունները այդ հողատարածքը պարտքի դիմաց վաճառել էին պետական գանձարանին: Վանի հայերը Սալախանեում գնել էին հողատարածք եւ նվիրել Վարագա վանքին:

Վանի տեղական եւ Կ. Պոլսի վճռաբեկ դատարանները հարցը վճռել էին ի օգուտ վանքի: Սակայն ԺԹ. դարի 90-ական թվականներին խնդրի գործադրությունը հապաղում է: Ավելի ուշ տեղական կալվածագրական մարմինները նոր կալվածագրեր են տալիս ոմն քուրդ Հասան աղային, ով հողատարածքը երկարաժամկետ վարձակալման՝ «հաքքը-կարարի» իրավունք է ստանում:

---

[5] «Վան-Տոսպ», Վան, 1913, ապրիլի 6, էջ 117, նաեւ «Ազատամարտ», 1909, նոյեմբերի 26, թ. 132, «Ատենագրութիւնք ազգային ժողովոյ», Կ.Պոլիս, 1910, էջ 260:

[6] «Մշակ», Թիֆլիս, 1909, հուլիսի 5, թ. 144:

[7] ՀԱԱ, ֆ. 421, ց.4, գ.11, թ.5:

[8] «Մշակ», Թիֆլիս, 1914, փետրվարի 19, թ. 36:

Բացի այդ, նա կեղծիքով եւ պաշտոնյաների գեղծումով իր անունը մտցնում է վանքի եւ Կ. Պոլսի կալվածական արձանագրությունների մեջ ու մայրաքաղաքից նոր քոչներ բերելով՝ դառնում է վանքի 164 կտոր հողերի փայատեր: Ինչպես ժամանակի մամուլն է արձանագրում, եթե մի մարդ պատեհություն ունենար տեսնելու կառավարության կալվածագրական մատյանները, «...շշմած կը մնայ, նրանք աւելի շուտ նմանվում են տգետ կրպակատէրերի դաֆթարներին, ճաթրտած, պատռված, քերված ու սրբված, որով ինչ գեղծումներ ասես չեն կարող առաջ գալ»[9]:

1913 թ. Վարագա վանքի հոգաբարձությունը փորձեց եղած վճռագրերի ուժով տեր դառնալ վանքի սեփականությանը: Սակայն երբ հարցը հասավ գործադիր մարմնին՝ Վանի նահանգապետին, գործը սառեցվեց[10]:

Վանքի հոգաբարձուների խորհրդի կողմից դատարանական արխիվներում գտնվեց կալվածագրական մի ցուցակ, որից պարզվեց, որ Սալախանեի հողերը պատկանում են միայն Վարագա վանքին[11]: Վանի Թահսին բեյը 1914 թ. մայիսի 7-ին մի վարդապետի եւ Վանի ոստիկանության պետին ուղարկեց Խոշաբ գավառ՝ համապատասխան հավատարմագրերով եւ վարչական եղանակով գյուղը վանքին վերադարձնելու համար: Հասան աղայի հայհոյանքների եւ սպառնալիքների ներքո հողերը վանքին հանձնելու պաշտոնական ձեւականությունը կատարելով՝ նրանք վերադարձան Վան: Սակայն որոշ ժամանակ անց Թահսինը շտապեց մի ուրիշ գրություն ուղարկել Խոշաբ՝ ըստ որի՝ հանձնախումբը սխալ էր թույլ տվել. քանի որ Սալախանե գյուղը հինգ մյութեւելիների անունով էր արձանագրված, ուստի նրանցից միայն մեկի, կամ հողերի 1/5 բաժնի փոխարեն կարելի էր վճռագրի գործադրությունը կիրառել, իսկ մնացած 4/5 բաժինը պետք է մնար Հասան աղային[12]:

Հարցը վերջնականապես լուծելու համար քուրդը հրավիրվեց Վան, իսկ հոգաբարձությանն առաջարկվեց զիջումների ճանապարհով բավարարվել միայն եղածով[13]:

Սակայն ավելորդ ընդհարումներից զերծ մնալու համար 1914 թ. հունիսին Թահսին բեյը Վարագա վանքի հոգաբարձության անդամներին

---

9 «Մշակ», Թիֆլիս, 1914, ապրիլի 12, թ. 76:

10 **Свящ. Р. Бекгульянц** (Северьянин), По Турецкой Арменіи. Впечатленія отъ поездки летомъ въ 1914 году, с.82.

11 «Մշակ», Թիֆլիս, 1914, մայիսի 29, թ. 115:

12 Անդ, ապրիլի 12, թ. 76:

13 Անդ, հուլիսի 4, թ. 144:

առաջարկում է Սալախանե գյուղը 1.000 լիրայի (8.600 ռուբլի) դիմաց վաճառել Հասան աղային՝ իբրեւ խնդրի լուծման միակ բարեհաջող միջոց: Երբ հոգաբարձության անդամները առարկում են՝ պատճառաբանելով, որ այն իրենց իրավասությունից դուրս է, նահանգապետը հեռագրում է Թալեաթին, որ վերջինս Նեջմեդդին մոլլայի եւ Գ. Զոհրապի միջոցով համոզի պատրիարքին ու ազգային ժողովի անդամներին՝ համակերպվել առաջարկին: Պատճառաբանությունն այն էր, որ հայերի փաստաթղթերը հիմնավոր չէին, իսկ Հասան աղայի ձեռքում կային կալվածաթղթեր[14]: Այս ամենն ասում էր այն պաշտոնյան, ով դեռեւս մեկ ամիս առաջ վանքի ունեցած դատական վճռագրերը համարում էր օրինական եւ նույնիսկ հոգաբարձության անփութությանն էր վերագրել հարցի լուծման հապաղումը: Մի բան պարզ էր. հայկական հարցի բարենորոգումների շրջանում իշխանություններն իրենց գործունեությամբ փորձում էին որոշ կարեւոր հարցեր եվրոպական վերահսկիչներին ներկայացնել իբրեւ վճռված:

Վանի նահանգի կնճռոտ եւ վիճահարույց խնդիրներից էր նաեւ Վանի հին գերեզմանոցի հարցը:

Վանից արեւելք՝ Քաղաքամիջում՝ քաղաքի պարիսպների մոտ, 1 քառակուսի վերստ տարածության վրա գտնվում էր Վանի՝ Բերդաքաղաք եւ Շամիրամ թաղամասերի հին գերեզմանոցը, որը հայտնի էր Հայկավանքի գերեզմանոց անունով:

1649 թ. Լիմ անապատից հայտնաբերված մի կալվածագրի (հեոջեթի) համաձայն՝ ոմն Խաչատուր Ճոռոթեցի այդ տարածքը նվիրել էր Վանի հայերին՝ ազգային գերեզմանատեղի կառուցելու համար: Նմանատիպ վկայություն էր պահպանվել նաեւ կառավարական կալվածագրական մատյաններում, որը գաղտնի էր պահվում: Այն, որ տարածքն իրոք հայկական գերեզմանոց էր, փաստում է Գ. Շերենցը՝ վկայակոչելով այն, որ նույնիսկ հարեւան թուրքերը տարածքը կոչել են «արմենի մէզարլըղի»՝ հայկական գերեզմանոց[15]:

ԺԹ. դ. 60-ական թվականների վերջերին Շքոտրալի Հասան փաշայի օրոք գերեզմանոցը պարսպապատվում է, սակայն քաղաքի հարավարեւելյան «Ենի-Կափու» դուռը կառուցելուց հետո Այգեստան տանող ճանապարհն անցնում է գերեզմանոցի գրեթե մեջտեղով:

---

[14] Անդ, հուլիսի 5, թ. 149:

[15] «Հովիտ», Թիֆլիս, 1914, հունիսի 22, թ. 24:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո Վանի առաջնորդարանը փորձ արեց այդ գերեզմանոցի՝ ճանապարհից դեպի հյուսիս ընկած մասը վերստին դարձնել հայերի սեփականությունը, որին փորձեց օժանդակել կուսակալ Թահսին բեյը: Սակայն նա ի վերջո առաջարկեց գերեզմանոցի այդ մասն էլ վերադարձնել քաղաքապետարանին: Արդյունքում, ինչպես «Հորիզոն»-ն է նկատում, ազգային գերեզմանատունը պիտի կորչեր եւ շուկային կցվելով՝ մեծ հասույթի աղբյուր կարող էր դառնալ[16]: Որպես «հիմք»՝ մատնացույց էր արվում թուրք էշրաֆների կողմից պատրաստված այն գրությունը, ըստ որի՝ այդ տարածքը եղել էր «ջինվիզների» սեփականություն, իսկ հայոց խաչքարերը տեղադրվել էին ավելի ուշ:

Ազգային քաղաքական ժողովը, որը մեծամասամբ կազմված էր դաշնակցականներից, 1912 թ. ապրիլի 12-ին փոխհամաձայնություն է ձեռք բերում Թահսին բեյի հետ եւ որոշում գերեզմանոցի որոշակի հատված զիջել քաղաքապետարանի նոր շենքի կառուցման համար, իսկ մնացած մասը սեփականացնել ազգի կալվածագրական (թափուի) արձանագրությամբ՝ այդ ձեւով լուծելով 30 տարվա վեճը:

Կրոնական ժողովի անդամները նույնպես համաձայնվում են գերեզմանատան տարածքից 50-60 կանգուն հատկացնել քաղաքապետարանին, իսկ մնացած տարածքում կառուցել առաջնորդարան, դպրոց եւ հասութաբեր կրպակներ[17]:

Իրավիճակը շիկանում է, երբ պարզվում է, որ նախապես որոշված 50-60 կանգունի փոխարեն, առանձնացվել էր 100 կանգուն տարածք, որ «մեռեալների ոսկորներն իրանց հանգստարանից հանվել ու դուրս են ձգվել»[18] եւ որ այդ աշխատանքների կարգադրությունը վերահսկում են դաշնակցականները եւ Քաղաքական ժողովի երկու անդամները: Արդյունքում հարյուրավոր մարդիկ ներխուժում են Առաջնորդարան եւ բացատրություն պահանջում: Առաջնորդական փոխանորդի բացակայության եւ Քաղաքական ժողովի անդամների անտարբերության պատճառով գործին միջամտում է Արամ Մանուկյանը, որը տեղեկացնում է, որ «...իրանց կուսակցութիւնն ու առաջնորդարանը որոշել են զիջել գերեզմանատան մի մասը, միւս մասը փրկելու եւ արժեցնելու համար»[19] եւ իբրեւ օրինակ՝ բերում է Թիֆլիսի պոլիտեխնիկումի շինության առիթով

---

[16] «Հորիզոն», Թիֆլիս, 1913, հունիսի 5, թ. 122:

[17] «Մշակ», Թիֆլիս, 1914, մայիսի 14, թ. 103:

[18] Անդ:

[19] Անդ:

հայ-վրացական վեճը: Ժողովրդի այն հարցին, թե արդյոք նրանք ունե՞ն իրենց ձեռքում կաթողիկոսի կամ Կ. Պոլսի հայոց պատրիարքի հրամանը, նա պատասխանում է. «Նրանց արդէն գրել ենք եւ կը յուսանք շուտով կը հասնի հարկաւոր հրամանը, դէհ դուք ինչ ուզում էք այն արեցէք»[20]*:*

Դժգոհ լինելով պատասխանից՝ ժողովուրդը կազմում է բողոք-հանրագիր, որի ներքո ստորագրում են հազարավոր վանեցիներ: Միաժամանակ, նախատինքի են ենթարկվում Քաղաքական ժողովի անդամները՝ որպես դավաճաններ եւ ազգի իրավունքը վաճառողներ, որոնք անցել էին իրենց իրավասության սահմանից: Նման բովանդակությամբ հեռագրեր են ուղարկվում Էջմիածին՝ Գեւորգ Ե. հայրապետին եւ Կ. Պոլիս՝ Հայոց պատրիարք՝ Մաղաքիա արք. Օրմանյանին:

Հետագայում պարզվում է, որ այդ ամենի նպատակն էր «այդ գնով աջողեցնել դաշնակ. մէբուսների ընտրութիւնը ընդդէմ ազգ. պատրիարքարանի առաջարկած մէբուսներին»[21]*:*

Անշուշտ, զգալով այդ սխալը, Քաղաքական ժողովի անդամները նույն օրը երեկոյան դիմում են վալիին, նրան հայտնում ժողովրդի մեջ առկա բողոքն ու դժգոհությունը եւ հետ վերցնում իրենց համաձայնությունը, իսկ քաղաքապետարանի շենքի կառուցումն էլ վալին տեղափոխում է այլ վայր:

Հայկավանքի գերեզմանոցի օրինակը մեկ անգամ եւս փաստում է այն ճշմարտությունը, որ բռնի գրավումներով չպետք է վիրավորել մի ամբողջ ժողովրդի կրոնական զգացումները եւ փոխզիջման գնալ այն դեպքում, երբ հնարավոր է օրինական միջոցներով ապահովել ազգի սեփականության իրավունքը:

Այդպիսով, երիտթուրքերն, ինչպես Արեւմտյան Հայաստանի մյուս շրջաններում, այնպես եւ Վանի նահանգում հայ բնակչությանը չտվեցին անձի ու գույքի ապահովություն, չլուծեցին եկեղեցապատկան ու վանքապատկան հողային հարցերը: Ինչպես արեւմտահայ գյուղացիները, այնպես էլ եկեղեցիներն ու վանքերն առաջվա նման մնացին սակավահող ու հողազուրկ՝ շարունակելով իրենց կախվածությունն աղաներից ու բեյերից, որոնք պարբերաբար սաստկացնում էին կեղեքումներն ու հարստահարումները:

---

[20] Անդ:

[21] Անդ:

РЕЗЮМЕ

После младотурецкой революции в 1908 году курдские помещики скрытым путем или насилием сохранили монастырские и церковные поместья армян. Пользуясь протекционизмом младотурок, они не учли истинные жалобы армянских духовных структур. В свое время армянские монастыри имели много обрабатываемых земель, которые были записаны на имена епископов. Но большинство из них умерли, не оставив наследников. В результате правительство посчитало эти земли как «маглюль» – государственные бесхозные земли, и пользовалось правом перепродажи, хотя очень хорошо знало, что они принадлежат монастырям и церквям. Правительство отказывало в перерегистрации земель, принадлежащих армянскому народу, несмотря на то что «мютевелинер» или их наследники объявляли о своем законном праве и протестовали (арагинов) против этого договора о землях.

SUMMARY

After the coup of the Young Turks in 1908, the Kurdish landlords, in a hidden way or by violence, retained in their hands the monastic and church estates of the Armenians. Taking advantage of the protectionism of the Young Turks, they ignored the factual complaints of the Armenian spiritual structures. At one time Armenian monasteries had many farms that were registered in the names of bishops. But most of them died without heirs. As a result, the government considered those lands to be ownerless and took the advantage of reselling them, although it was very well known that the lands belonged to monasteries and churches. The government refused to re-register the lands belonging to the Armenian people, despite the fact that their successors declared their legal rights and protested against that land treaty.